

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՀԱՅԱՍՏԱՆԻՆ**

Ձեռքերուս մէջ հիմա ամբողջ աշխարհներու ջահճը ունիմ,
Կ'անցնիմ հարուստ՝ կեանքին մէջէն, նոր բերքերու շահճը ունիմ.
Ու զիս զինած մոլեգնութեամբն ու խոյանքովն այս ողջ Դարուն՝
Կը մտածեմ թէ մեծ եմ ալ, ու յաւերժին պահճը ունիմ:

Կը մտածեմ թէ, իմ երկիր, վստահուած է շողդ ինծի,
Պայքարներուն մէջէն եկած ու հասած է դողդ ինծի.
Ինչ փոյթ թէ այժմ հեռուն ես դուն, եւ օտար է հողըդ ինծի՝
Ես հողիդ շունչ ու կեանք տուող՝ ամենագոր բահճը ունիմ:

Կանգնած եմ ես ահա խոհուն՝ տարածութեան մը վըրայ լայն
Ու կուտակած՝ երգերուս մէջ վերածնուող այս առօրեան...
Ալ ես ինչպէ՛ս կրնամ հինին դառնալ նորէն ու յուզել զայն,
Երբ անստոյգ երագներու այնքան առատ մահճը ունիմ:

Արդէն, երկիր իմ կառուցուող՝ ներշնչումի կիրք ես հիմա,
Սերունդներուն համար բոլոր՝ ստեղծարար ձիրք ես հիմա,
Պարզուեր ես մեծ գաղտնիքին ու յաւէտ բաց գիրք ես հիմա,
Ու ես քեզմով աստուածներու ձեռքէն խլուած գահճը ունիմ:

ԱՐԱՄ-ԱՐՄԱՆ

1929

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Հոգիներու մէջ կորսուած՝ հիմա քանի՛ մատեաններ կան,
Խաղաղ ու ջինջ երկինքի տակ՝ փոթորկայոյզ ովկիանոսներ կան,
Ի՛նչ փոյթ թէ փոքր ես տակաւին, կը բաւէ որ դարն է անհուն,
Ու հասարակ տենդերու մէջ իսկ յաւերժի վայրկեաններ կան:

* * *

Դուն ուզեցիր որ սիրտդ ըլլայ հատնող ու թարմ շունչի մը պէս,
Ու լիանայ յոյզըդ տակաւ՝ գարնանային փունջի մը պէս.
Ու թուեցաւ կեանքը քեզի ծանրը այնքան եւ այնպէս հին
Որ այս դարու հարցումներուն մէջէն անցար մունջի մը պէս:

ԱՐԱՄ-ԱՐՄԱՆ